**Հավելված**
**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի**
**Արթիկ համայնքի ղեկավարի**
**2025 թվականի օգոստոսի 26-ի N 1228-Ա որոշման**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Փանիկի արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին

| N | Տնօրենի թափուր պաշտոնի անվանումը | Հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները) | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, ով՝ | Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1.<br>2. | **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի <<Փանիկի արվեստի դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն** | 1. Մրցույթին մասնակցելու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի՝<br>1) բարձրագույն կրթություն.<br>2) հանրային ծառայության առնվազն չորս տարվա ստաժ կամ առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ համապատասխան բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.<br><br>2. Տնօրենի ընտրության լրացուցիչ պայմաններն են՝<br>1) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.<br>2) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.<br>3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.<br>4) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.<br>5) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.<br>6) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:<br><br>**Տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասնակիցների՝ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված պահանջները հավասարապես բավարարելու դեպքում մրցութային Հանձնաժողովի կողմից մասնակցին հաղթող ճանաչելու մասին որոշում կայացնելիս կարող են հաշվի առնվել նաև սույն կարգի 4-րդ կետով նշված լրացուցիչ պայմանները:** | Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը՝<br>1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը մարված կամ վերացված չէ.<br>2) ում օրենքով արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել կամ ով զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.<br>3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար.<br>4) 65 տարին լրացած քաղաքացիները.<br>5) ներկայացրել է փաստաթղթեր, որոնք չեն համապատասխանում սույն կարգի 12-րդ կետով սահմանված պահանջներին, լրիվ չեն կամ թերի են: | 1) դիմում.<br>2) մեկ լուսանկար՝ 3x4 չափսի.<br>3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.<br>4) ինքնակենսագրություն.<br>5) անձնագրի կամ նույնականացման քարտի, բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի, արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի, նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի դեպքում հավաստագրի՝ բնօրինակները և պատճենները.<br>6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.<br>7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):<br><br>Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: |
| **Մրցույթներն անցկացնելու վայրը, օրը, ժամը,** | | **Դիմումների և փաստաթղթերի ընդունումը** | | **Դիմումների և փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը** |
| **վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, Արթիկ համայնք, քաղաք Արթիկ, Ազատության հր. 1, 1-ին հարկ, նիստերի դահլիճ**<br>**օրը՝ 2025 թվականի սեպտեմբերի 30-ին**<br>**ժամը՝ 11:30** | | **Փաստաթղթերը ներկայացնելու, լրացուցիչ տեղեկություններ և հարցաշարեր ստանալու համար դիմել ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան (հեռ. 0244-5-20-21):**<br>**Փաստաթղթերի ընդունումը՝ ամեն օր, ժամը 09:00 – 18:00, բացի ոչ աշխատանքային օրերից:** | | **2025 թվականի սեպտեմբերի 15-ը ներառյալ:** |